№ 22 Փետրվարի 13 (25) 1880 Փետրվարի 13 (25) № 22

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլ։ կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ սովի մասին։—Ներքին տեսութիւն։ Մի նկատողութիւն։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Ֆրանսիա։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։ — Բանասիրական։ Ցեղկագիր առ անգլիական հիւպատոս։

ԴԱՐՁԵԱԼ ՍՈՎԻ ՄԱՍԻՆ

Շատերից լսում ենք հետևեալ դատողութիւնները Թիւրքաց Հայաստանի սովի մասին՝ ի՞նչ գործ ունենք մենք, կովկասեան հայերս Վանի կամ Մուշի սովատանջների հետ. մենք մեր սեփական դարդեր ունենք այստեղ....

Այդ տեսակ դատողութիւնները ոչ թէ միայն անմարդասէր են, բայց և վերին աստիճանի անգործնական են։

Հին կլասիկական աշխարհում, Աթէնքում կամ Սպարտայում, ամեն մի երկիր ուրախանում էր, երբ նրա հարևան երկրում դժբաղդութիւն, սով, կամ հիւանդութիւն էր լինում։ Մէկին հասնող փնասը, միւս երկիրներին ուրախացնում էր....

Բայց այժմ այդպէս չէ. ընդհակառակն, այժմեան դարում մի երկրին հասնող փտանգը իր բոլոր հարևան երկիրներին էլ փնաս է տալիս։

Մեր կարծիքով ոչ թէ միայն կովկասեան հայերս պէտք է օգնութեան ձեռքը մեկնենք Վանի սովատանջներին, բայց նոյնը պէտք է անեն և մեր երկրի բոլոր միւս ազգաբնակութիւնները։ Եթէ մենք չօգնենք այժմ Վանի սովատանջներին, երբ գարունը կը դայ, Թիւրքաց Հայաստանի թշուառ ազգաբնակութիւնը կը թափվի մեր սահմանները—և մենք դարձեալ ստիպված կը լինենք նրանց պահել մեր միջոցներով։

Բացի սորանից յայտնի է որ սովից յետոյ յայտնվում են միշտ զանազան վարակիչ հիւանդութիւններ։ Եթէ Թիւրքաց Հայաստանում յայտնվեն այլ և այլ ցաւեր, որոնք միշտ հետևանք են լինում սովի, նոյն ցաւերը կարող են և մեր երկիրը անցնել....

Ուրեմն մենք ամենքս պէտք է աշխատենք օգնութեան ձեռքը մեկնել Հայաստանի թշուառ սովատանջներին ոչ թէ միայն ազգասիրական կամ մարդասիրական կէտից, բայց մինչև անգամ բուն գործնական և եսական կէտից։

Գոնէ այդ տեսակէտը ըմբռնէինք, և այդ տեսակ շարժառիթից դրդված շտապէինք օգնութեան ձեռքը մեկնելու մեր սովատանջ ցեղակիցներին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Յայտնելով իմ համակրութիւնը պ. Դաղեանցի «Աշխարհաբար լեզուի մասին» («Մշակ» 1879 № 214) յայտնած գլխաւոր մտքերին՝ կը ցանկայի երկու խօսք աւելացնել այն մասին, թէ մինչև ո՞ր աստիճան անձիշդ ենք հայերս մեր տոհմանունների և անունների վերաբերութեամբ։

Մենք տեսնում ենք, որ ամեն մէկ ազգ, ամեն մէկ ցեղ ունի իր յատուկ տոհմանունի ձևը—ոմանք ուելացնում են մէկ յայտնի մասնիկ բառի վերջից կամ առաջից, ոմանք ոչ—ու դրանով հակացվում է—սակաւ բացառութեամբ—թէ ով ինչ ազգութեան կամ ցեղին է պատկանում։ Հրէաները—այդ մեզ վինակակից ազգութիւնը միակ է, որ յեղյեղում է իր տոհմանունի ձևը՝ յարմարեցնելով այն պետութեան ձևին, որին հպատակ է, կամ եղած է ժամանակով։ Մի քանի վրացիք կամ ռուսահպատակ թուրքեր, ի հարկէ, մեզ օրինակ լինել չեն կարող։

Իսկ մեզանում վերցրէք առաջին ձեռք ընկած լրագիրը, սմնակիրը, զիրքը, ապիշան և այլն, ու կը տեսնէք որ ոչ թէ միայն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՌ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՍ ԿԱՐԴՈՅ ՊԱՐՈՆ ԹՐՈԹԹԵՐ

Վսեմափայլ Տէր,

Ընդհանրապէս հիմնական բարեգործութեանց և երկրին զարգացման անկարելիութեան պատճառ կը տրուին իւր ելմտական տաղնապը և արտաքին անընդհատ խռովումները։

Այսօր, վսեմափայլ տէր, պիտի համարձակիմ անհերքելի փաստերով ձեզ ցուցնելու որ երկրին և կառավարութեան արդի տաղնապը Բ. Դրան մի քանի պաշտօնէից 30 տարիէ ի վեր բռնած քաղաքականութեան հետևանքն է։ Այս պաշտօնեայք նկատելով թէ զինուց յաղթութիւնը այլ ևս ձեռնտու չէր Օսմանեանց բաղդին, թէ իսլամութիւնը այլ ևս չը պիտի կարենայ, գէթ ազատօրէն, իւր զոհերը քրիստոնէութենէ առնուլ և թէ քրիստոնեայ հպատակ ժողովրդոց զարգացումը իրենց ազգային իրաւանց պաշտպանութեան պատճառ պիտի լինէր, թերևս ի վնաս Օսմանեան կառավարութեան, խորհեցան իսլամ տարրը իւր զօրութեան մէջ պահելու կամ աւելի ևս զօրացնելու համար, չէրի և վազքի, աչարի և աղնամի *) դրութիւնը չարունակել. թափուն (հողային կալուածոց տիտղոս) հնարել և գործադրել. գաղթական չէրքեզները և թէրէքէմները ընդունել և զայնս հաստատել քրիստոնեաներու բնակած գաւառները. *) սանձահարել, խրախուսել, ըստ պարագայից, քիւրդերը և ուրիշ թափառական ցեղերը, և այս առիթներով, իսլամթի (զգացումն) պատրուակաւ ժամանակ առ ժամանակ, մինչ մի և նոյն ցեղերի վրա յաջորդաբար զօրագունդներ յղել կամ յեսս կոչել։

Այս դժբաղդ ձեռնարկութիւնքն են որ առաջ բերին երկրին և կառավարութեան ներկայ սոսկալի տաղնապը։

Դերջանի մէջ ի գործ դրուած հարստահարութեանց վրա այս համառօտ ծրագրիս առթիւ ձեզ պիտի յայտնեմ 30 տարիէ հետէ դարերէ ի վեր այս երկիրը բնակող քրիստոնեայ ժողովուրդները հարստահարելու և նոյն իսկ իսպառ ջնջելու համար ձեռք առնուած միջոցները։

Անհաւասիկ զանազան թուականներու մէջ Դերջանի մէջ գործածուած հարստահարութեանց համառօտագիրը, որուն ընդարձակը Կ. Պոլսոյ հայոց Պատրիարքին յանձնուած է։

1. Հայոցմէ 1500 սոմար *) ցորենի սերմ պարունակելու չափ տարածութիւն ունեցող հողեր գրաւած են։

2. Մերթ ընդ մերթ Պէյերը 500-ի չափ քիւրդերու գլուխն անցած յարձակած են հայ գիւղերու վրայ և մինչև հիմա կրցած են տանել 6303 տաւար։

3. Հինգ եկեղեցիք և վանորայք կողոպտուած և քանդուած են։

4. Այս վերջին երկու տարիներս միայն 25 սպանութիւնք տեղի ունեցած են։

5. Բազմաթիւ կանայք առանգուելով իսլամացած են *)։

6. Այս վերջին երկու տարիներս հայերէն 44,000 դահեկան դրամ առնուած են, մի և նոյն ժամանակ հայերը մեծամեծ և անտանելի վնասներու ենթարկված են *)։

Դերջանի այս ցուցակին աւելցուցէք նաև արդէն Բղիի համար պատմածներս. այսպէս Պէյերը միշտ բռնութեամբ ստացածներն կէրտքէի, Ազապիյի, Բէսսիմի և Սուռայի հարկերը։

Բաց ասած, Ղուզիճանի քիւրդ Պէյերը իրենց սեփականած են 35 հայ գիւղեր, որոնց բնակիչները վանած են Ղարխզուլախ, Խլլախ, Լսպէվերէք, Հապղեոր, Բուն, Ջամուռդերէ, Քառնեթաք, Սարըղայա, Հերանի, Թարի, Կէօքդաշ, Սասըն, Ազվերան, Սուրէն, Քէղմեզի, Քաղոլոյի, Քոմ, Մուֆուխ, Լիմալը, Զոր, Ղազուլճա, Իշտամ, Քիլլիւ, Սէօլմիւբ, Պուլանրխ, Ակէր, Մանդառա, Եայլա, Խարլն, Վէրէնկիւղ, Կէօլեր, Կոնկա, Զէօռլիբ, Պալգիւղ, Լէրէնի։

Եւ այս յափշտակութիւնը տեղի կունենայ այն ժամանակ, երբ քրիստոնեայ Եւրոպան Թիւրքիոյ գոյութիւնը կը գնէր իւր արեամբ (1854-56) Ղուզիճանի քիւրդերը զանոնք իրենց մէջ բաժնած են յաջորդաբար անոնց տիրելով, երբեմն սպառնալեաք և երբեմն բազմաթիւ գունդերով յարձակմամբ։ Ի հաստատութիւն այժմ պիտի յիշեմ երկու օրինակներ, որ ձեզ պիտի լուսաւորեն ուրիշ գաւառներու մէջ գործածուած յափշտակութեանց և հարստահարութեանց կերպերը հասկնալու։

Փուն գիւղը 350 տուն հայ և 150 տուն թուրք կար։

Շահ Հիւսէյնն պէյի եղբայր, Եուսուֆ աղա և Զէբիէճի Սէյիտ մոլլա կամ Ֆէհրատ Խամայիլ, որոց երկուքն ալ Ղուզիճանցի են, 180-էն աւելի զինեալ անձանց հետ առաջին անգամ գիւղին վրա կը յարձակին և բնակիչներէն երկու հոգի, Ալի պէյ տաճիկը և Մուխտար Մարտիրոս հայը կը սպաննեն, և վերջապէս գիւղը կը կողոպտեն և կաւերեն. 6 տարի ետքը երկրորդ յարձակում մը կընեն 300 զինեալ անձանց հետ. Մելքոն քահանային կինը և Գրիգոր Քէրթիճը կը սպանեն և գիւղը ամբողջապէս անընակ կը դարձնեն։ Այսօր բուն 5 տուն հայ և 4 տուն Մարապաճի քիւրդ կը գտնուի։ Ինչ եղան 350 տուն հայերը, թափառական կեանքը զանոնք ոչնչացուց։

Սուրէն գիւղն ալ, փունի պէս Ղուզիճանի ուրիշ պէյերուն զոհ եղած է. սրա անոր վրա յարձակելով՝ հայերէն առած են 600 ոչխար, 200 կով. 3 նշանաւոր հայեր, Աւետիս, Գալուստ և Արդեն կը սպանեն, կիներ կը բռնաբարեն և վերջապէս խեղճ հայերը կը վանեն։ Սուրէն երբեմն պաշտօնէից սթռատեղի, այսօր 10 տուն Մարապաճի քիւրդի տուն ունի. ինչ եղած են իւր հայերը....Այս բարբարոս պէյերէն մէկ քանին ստոյգ է որ ատեն մ'աքսորված մնացին, բայց չուտով վերադարձան, և ոչ միայն երբեմն յափշտակուած կալուածոց տէր մնացին, այլ և հետզհետէ չրջակայ հայ գիւղերն ալ տիրեցին, և նոյն իսկ թափուով հաստատուած կալուածներուն ալ։ Այսպէս մինչդեռ մէկ կողմէն կալուածները կը չատցնեն, միւս կողմէն իրենց հարստահարութիւնները կը չարունակեն միշտ և ազդեցութիւններն կը կրկնապատկեն, որովհետև իրենց ձեռքին մէջ ունեն տեղական կառավարութիւնը, որոյ անդամք, պաշտօնեայք, դատաւոր և զապթիէ, պէյեր կամ պէյերու ազգականներ և կամ պէյերուն հրամանաց հնազանդ և անձնուէր քիւրդ ծառաներ են *)։

Հողի այս անիրաւ յափշտակութիւնը, որոյ ենթակայ են հայերը Հայաստանի մէջ, ուշադրութեան արժանի կարևոր իրողութիւն մէ, որովհետև հայոց համար կենաց և մահու խնդիր մէ։

Մանաւանդ լեռնցի հայերը կը կրեն այս զրկանքը, որ գաղտնի քաղաքականութեան նպատակին հասնելու մի միջոց է, այս է, Ցորոս և Կորդուաց լեռները քիւրդերով լեցնելու և Ռուսաց ապագայ արշաւանաց դէմ քիւրդերը մի պատուար կանգնելու։ Բ. Դրան մի քանի պաշտօնեայք յղացան այս յատակագիծը, և 1856-էն (այսինքն այն թուականէն ի վեր, յորում քրիստոնէից հաւասարութեանց և իրաւանց վրա կը խօսուէր և

*) Վերին դատաստանական գործերու, վաղքիը և մանաւանդ թափուն կալուածական խնդիրները, և ամենայն ուշադրութիւն՝ Քրիստոնէից իրաւունքները իսպառ զոհելու զօրաւոր միջոցներ են։

*) Եւ ոչ թէ Արաբիոյ կամ ուրիշ որ և իցէ իսլամաբնակ գաւառ։

*) Մէկ սոմարը գրեթէ 385 քիլոկրամ կարէ։

*) Այսպէս Բաղաձիլ գիւղին մէջ երկու հայ երիտասարդ քոյրեր Թուղլաճի Խամայիլ և Անմէտ երկու թուրք եղբարց ձեռքը առանգուած են։

Ստոյգ է որ հայոց բողոքելովը ոճրագործները և օրիորդները Էրզրում բերուեցան, բայց սրա առանց դատապարտութեան վերադարձան, յետոյ անմիջապէս եղբայրներէն մին կրտսեր քոյրը իրեն կնութիւն կառնու հարսանեաց մեծ հանդէսով, մինչդեռ Օսմ. օրինագիրքը խստիւ կը պատժէ կիներ և աղջիկներ առանգողները։—Մէկ ամիս առաջ Կէօքդաշ գիւղին մէջ, ուր միայն երկու տուն հայ կը գտնուի, երկու աղջիկներ առանգուեցան։ Միայն հայրը վերջերս սպանուեցաւ, մինչև ցարդ ոչ առանգիչները և ոչ մարդասպանները գտնուած են։

*) Օրինակի համար, դեռ ևս այսօր, Շահ Հիւսէյն և իրենները տարիներէ ի վեր ազատորէն Ղուզիճանի վարչութեան մէջ պաշտօն կը վարեն։